

ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՅԻՆ ԵՎ ԳՐԱԲԱՐԻ ՈՒ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ
ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

ՎԱՆՈՒՀԻ ԱՃՆՄՅԱՆ

Մխիթար Սեբաստացու և իր աշակերտների «Բառգիրք հայկազեան լեզուի» աշխատությունը հիմք հանդիսացավ հայոց լեզվի գիտական պատմության ստեղծման համար¹։

Մ. Սեբաստացին ինքը խորապես ուսումնասիրել էր հայոց լեզվի զարգացումը նախաօրինակ աշխատառ հայերենի շրջանից մինչև իր օրերը, այդ կապակցությամբ հանգել որոշ եզրակացությունների, որոնք արտացոլված են Հին հայկազյան բառարանում։

Առաջին հատորի առաջաբանում նա անդրադառնում է հայոց լեզվի պատմության հարցերին բառարանի կազմության սկզբունքներն ու եղանակը պարզաբանելու սահմաններում։ Այսպես, գրաբարի բառապաշարի ճիշտ ընտրությունը հիմնավորելու նպատակով նա հարկ է համարում առաջին հերթին ճշգրտել գրաբարի և նրան հաջորդող փուլի սահմանը։ Այդ սահմանը, նրա կարծիքով, պետք է դնել այնտեղ, որտեղ գրաբարը արդեն դադարել է ընդհանուր խոսակցական լեզու լինել, որպես այդպիսին տեղը զիջելով ժամանակի ընթացքով աստիճանաբար կազմավորված միջին հայերենին։ «Ի սկզբանէ յառաջին գարուց, յորում բարբառ մեր ստեղծաւ, ամենայն հայք խօսէին դրաբառ լեզուաւ։ Այլ ի յառաջել դարուց և ընդ վտարիլ կողմանց, և ընդ խառնակիլ ազգաց, առ սակաւ սակաւ ալլայլեցաւ ընդաբոյս բարբառն, ըստ տառի, ըստ վանկի, ըստ բառի, ըստ հոլովման, և ըստ ալլոց հանգամանաց լեզուի։ Ստեղծան և անհամար բառք գառառականք, սպրդեցին մտին և բազում բառք ալլազգականք, և ել բարբառս այս ուսմական, որ կոչի աշխարհաբառ լեզուաւ»։

Հատկանշական է, որ XVIII դ. առաջին տասնամյակներին աշխարհաբարը դեռևս կազմավորված չէր, հետևաբար գոյություն չունեին միջին հայերեն հասկացողությունը. պարզ է, որ աշխարհաբար տերմինը այդ ժամանակ չէր կարող ունենալ իր այժմյան իմաստը։ Մ. Սեբաստացու ըմբռնմամբ՝ աշխարհաբար է այն, ինչ ալլևս գրուց լեզու չէ։ Ինչ վերաբերում է նրա օգտագործած գրաբար բառին, այն իմաստափոխության չի ենթարկվել, քանի որ ճիշտ է բնորոշել հին հայերենը՝ ի տարբերություն վերջինիս զարգացումը հանդիսացող և արդեն վաղուց իր գոյությունը հաստատած՝ ուսմական կամ աշխարհաբար լեզվի։ Ավելի հստակ սահմանադատելու համար գրաբարը, Մ. Սեբաստացին ընդգծում է, որ այդ «վաղածին» լեզուն ժամանակի ընթացքում գործածական միայն ազնվականների ու գիտնականների շրջա-

¹ Վ ա ն ու հ ի Ա ճ ն մ յ ա ն, Հին հայկազյան բառարանը հայոց լեզվի պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուր (ՀՍՍՀ ԳԱ, «Լրաբեր», 1977, № 9, էջ 99—103)։

² «Բառգիրք հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1749, էջ 13։

նակում և անցավ գրավոր ընդլի աստիճանին՝ պարփակված սկզբնական այն նույն կանոնների մեջ, որոնք հաստատվել էին դեռևս կոապաշտական ժամանակի հայ մեծամեծ ընդվագետ դպիրների կողմից³։

Այսպիսով, ըստ Մ. Սեբաստացու, գրաբարը ունեցել է կայուն օրինաչափություններ սկսած կոապաշտության շրջանից մինչև աճյն ժամանակ, երբ փոխարինվեց միջին հայերենով։

Պետք է կարծել, որ կոապաշտական շրջանի հայերենի օրինաչափությունների մասին Մ. Սեբաստացու դատողությունը փաստացի է, և ոչ ենթադրության վրա հիմնված։ Նկատի ունենալով, որ նախամաշտոցյան, առավել ևս կոապաշտական Հայաստանի հայ գրի ու դրականության հարցը մինչև օրս տարակարծությունների տեղիք է տալիս⁴, ավելորդ չենք համարում անդրադառնալ Մ. Սեբաստացու այդ կապակցությամբ բերած փաստերին։ Նա գրում է. «Իսկ վաղածին լեզուն մնացեալ ի մէջ ազնուաց և իմաստնոց՝ էանց ի գիրս, և եղև մեզ ի լեզու դրաբառ. փակեալ սկզբնատուր կանոնօք եղելովք ի բնութենէ, և հաստատելովք ի լեզուագէտ ճարտարաց Հայաստանեայց, որպիսի էին մեծամեծ դպիրք Հայաստան աշխարհի առ ժամանակօք կոապաշտութեան, որք առ ի չգոյէ հայկական այբուբենից՝ վարեալ գրովք պարսից և ասորաց և յունաց մինչև ցտուրբն Մեսրօպ, գրեցին զբազում մատենաս, որպէս վկայէ քաջաբարբառն քերթօղն Մովսէս, յասելն. խորեն. ա. պր. բ. Բանդի գտանին և միջոցք լեալ պատերազմացն և գիր պարսից և յունաց, որովք այժմ գիտից և գաւառաց, ևս և իւրաքանչիւր տանց առանձնութեանց, և հանոսրց հակառակութեանց և դաշանց՝ այժմ առ մեզ գտանին անբաւ զրուցաց մատենանք»⁵։ Տրամաբանորեն պետք է ընդունել, որ Մ. Սեբաստացին, եթե գրաբարի կանոնների հաստատումը կապում է կոապաշտական Հայաստանի ընդվագետ մեծամեծ դպիրների գործունեության հետ, նկատի ունի վերոհիշյալ դպիրների հայերեն լեզվով գրած «բազում մատյանները»։ Նաև պետք է ընդունել, որ Մ. Սեբաստացին, եթե այդ մատյանների գրությունը կապում է պարսկական, ասորական և հունական «գրերի» օգտագործման հետ «մինչև ցտուրբն Մեսրօպ» և «առ ի չգոյէ հայկական այբուբենից», նա զիջ ասելով հասկացել է տառանիշ, և ոչ թե «մատենան», կամ «երևելի և զբխաւոր մասունք միոյ մատենի», կամ «գիտութիւն կամ բանքն իմաստութեան»։ Հետևաբար, պետք է ընդունել, որ տվյալ դեպքում Մ. Սեբաստացու խոսքը վերաբերում է նախամաշտոցյան շրջանում պարսկատառ, ասորատառ և հունատառ հայերենով, և ոչ թե պարսկերեն, ասորերեն և հունարեն լեզուներով գրված մատյանների։ Սակայն հարց է ծագում, ինչու՞ այդ կապակցությամբ Մ. Սեբաստացին բերել է միայն պարսկադիր և հունադիր մատյանների գոյության մասին խորենացու վկայությունը, երբ Ղ. Փարպեցու մոտ կա վկայություն. նաև ասորադիր հուշարձանների մասին. «Վասն զի ասորի և յոյն գրով վճարէին յայնժամ զգործ թագաւորացն հայոց՝ արքունի դպիրքն, զվճռոցն և զհրովարտակացն»⁶։ Պատասխանը միայն հետևյալը կարող է լի-

3 Նույն տեղում։

4 Է. Բ. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրի ու դրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Երևան, 1977։

5 Քառագիրք հայկազեան լեզուի, Ա, էջ 13։

6 Վաղարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1904, էջ 13։

նեւ, Մ. Սեբաստացին նպատակ է ունեցել ոչ թե ծանոթացնել ընթերցողին հայ հին պատմիչների գործերին, որոնք առանց դրան էլ պետք է ծանոթ լինեն հայոց լեզվով զբաղվող ամեն մի անհատի, այլ պարզապես ապացուցել, որ այդ գործերի նախամաշտոցյան շրջանին վերաբերող հատվածներում գիրքառը կարող է օգտագործված լինել տառանիշ իմաստով:

Հին հայկազյան բառարանի առաջաբանից տեղեկանում ենք, որ նախամաշտոցյան ալլատառ հայերեն հուշարձանների միայն որոշ մասն է անադարտ մնացել մինչև XVIII դ. սկիզբը. «Եւ ի սոցանէ ինչ ինչ հասին և մինչև ցժամանակս մեր, և բազումք առ ի շփոյէ տպագրութեան կորեան, է՝ որ պատերազմօք, է՝ որ հրդեհիւք, և է՝ որ փտութեամբ, որպէս և ոմանք անյիշատակ թաղեալ լինելով ի խորս երկրի»:

Ինչպես արդեն նշել ենք, Հին հայկազյան բառարանի առաջաբանում հայոց լեզվի պատմության հարցերը շոշափված են բառարանի կազմության սկզբունքներն ու եղանակը բացահայտելու համար միայն: Բնականաբար, այդ հանգամանքը ստիպել է Մ. Սեբաստացուն տվյալ հարցերի վրա կանգ առնել չափազանց հակիրճ: Ըստ երևույթին, այդ է պատճառը, որ նախամաշտոցյան ալլատառ հայերեն հուշարձանների ուսումնասիրությունից բխող հայագիտական մի կարևոր նորություն մինչև օրս հասկանալի չի եղել կամ ուշադրություն չի արժանացել:

Այսպես, նշելուց հետո, որ նախամաշտոցյան ալլատառ հայերեն հուշարձանների որոշ մասը հասել է մինչև XVIII դ., Մ. Սեբաստացին անմիջապես ավելացնում է. «Արդ՝ յայսմանէ ամենայնէ յայտ է թէ լեզուն գրոց յառաջին դարսն էր թարբառ հասարակաց, և յետոյ մասնաւորեցաւ: Եվ ապա շարունակում է. «Զոր և ցուցանեն մեզ բազում բառք գրոց խրթնածածուկք և սակաւ գրագիտաց յայտնիք, սփռեալք ի զանազան գաւառս Հայաստանեայց. և մնացեալք ի յաշխարհաբառն իբրու նշմարանք ընդադոյս լեզուի, որպիսի են ի Մեծ Հայս և ի կողմանս պարսից՝ բառքս՝ երախք, հաճար, քանդուկ: Ի կողմանս Կարնոյ՝ աղտոր, գրմունչ, հօրուտ, մարմանդ, վարունկ, թումբ: Ի կողմանս Սեբաստիոյ՝ աղբն. աղի, այսինքն դաս. կամ գումար. կապկամ. շրէժ. պրակ. սինձ. սերեկ: Ի կողմանս Ակնայ. գոզի. եղջիր. խեր կաթին. պժգալ. փաթաթ: Ի կողմանս Տրապիզոնի. ծուաղ. կողղինջ. մուջլ: Ըստ այսմ իմա՝ և յաղագս այլոց բազմաց»:

Ինչպես Մ. Սեբաստացու հայտնած մտքի, այնպես էլ դրա հիմնավորման նպատակով բերված ապացույցների պարզաբանումը կապված է մի շարք դժվարությունների հաղթահարման հետ:

Առաջին դժվարությունը վերաբերում է հիշված 26 «խրթնածածուկ» բառերի հնչյունական ձևին: Մ. Սեբաստացին միայն տեղեկացնում է, թե դրանք հայկական զանազան գավառներում սփռված գրաբար բառեր են, ընթերցողին թողնելով հասկանալ, որ տվյալ դեպքում կարևորը նրանց նախնական ձևն է և ոչ բարբառային: Վերահիշյալ բառերից 21-ը նույնությամբ արտացոլված են Հին հայկազյան բառարանի գրաբարի բառացանկերում⁹, երկուսը՝

7 «Բառգիրք հայկազեան լեզուի», Ա, էջ 13:

8 Նույն տեղում, էջ 13—14:

9 «Բառգիրք հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1749, Բ, Վենետիկ, 1769:

վարունկ և շրէժ, նույն բառացանկերում արտահայտված են երկակի ձևով կամ ուղղագրությամբ՝ «վարունգ կամ վարունկ», «շրէգ կամ շրէժ», այլ երկու բառեր՝ երախ և խեւ կաթին, տրամաբանորեն համապատասխանում են այդ բառացանկերի երախ և խեւ բառերին. որպես բացառություն ծուաղ բառը վերոհիշյալ գրաբարի բառացանկերից ոչ մեկում տեղ չի գտել, սակայն որքան էլ տարօրինակ թվա, տեղ է գտել աշխարհաբար-գրաբար բառարանում՝ որպես գրաբար բառ:

Բնականաբար հարց է առաջանում. ի՞նչ պատճառով այդ 26 «գրոց» կամ «ընդարոյս» լեզվին հատուկ բառերը միասնական հիմունքով չեն արտացոլված Հին հայկազյան բառարանի բառացանկերում: Բավական դժվար լուծելի հարց, հատկապես եթե հաշվի առնենք, որ գրաբարի բառացանկերում մտցված են նույնիսկ գրաբարում անգործածական գավառական որոշ բառեր¹⁰, իսկ ծուաղ-ը՝ ոչ:

Այս դեպքում մեղ օգնության են հասնում պատմական հնչյունաբանության տվյալները: Հայտնի է, որ միջին հայերենում գրաբարյան ու-ն ձայնավորից առաջ, որպես կանոն, վ էր արտասանվում¹¹: Այդ հնչյունափոխական օրինաչափությունը չէր կարող անծանոթ լինել Մ. Սեբաստացու նման խորաթափանց և պրպտող մտքի տեր գիտնականին, հետևաբար, նա չէր կարող հաշվի չառնել այն իրողությունը, որ XVIII դ. սկզբներին բանավոր լեզվում ու-ն ձայնավոր հնչյունակապակցության գրաբարյան արտասանության դեպքերը պետք է հատուկ լինեին բացառապես գրաբարից մնացած բառերին: Հին հայկազյան բառարանում ծուաղ-ի յուրօրինակ արտացոլման պարագան վկայում է, որ Մ. Սեբաստացին այդպիսի նկատառումներով է որոշել այդ բառի գրաբարյան ակունքները և գրության ձևը¹²:

Մնում է պարզել, թե ի՞նչ պատճառով այդ 26 «գրոց» կամ «ընդարոյս» լեզվին հատուկ բառերը միասնական հիմունքով չեն թվարկված Հին հայկազյան բառարանի առաջաբանում, քանի որ, ինչպես արդեն նշել ենք, վերոհիշյալ բառերից չորսը, ի տարբերություն մյուսների, գրաբարի բառացանկերում տարբեր ձևերով են արտահայտված:

Հին հայկազյան բառարանի ուշադիր ուսումնասիրությունը և նախորդող բառարանների հետ համեմատական քննությունը հնարավորություն ընձեռեց բացահայտել, որ այս դեպքում ևս Մ. Սեբաստացին որոշակի նկատառումով է առաջնորդվել:

Համեմատության պատկերը խնդրո առարկա բառերի վերաբերյալ հետևյալն է.

Ա. Հին հայկազյան բառարանի գրաբարի բառացանկերի վարունգ և վարունկ բառերի փոխարեն նույն բառարանի աշխարհաբարին վերաբերող բոլոր բաժիններում ունենք խըյաւ և խիաւ, Ռիվուլայի և Շրոդերի բառարաններում

¹⁰ Նույն տեղում, Ա, էջ 13:

¹¹ «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Ա, Երևան, 1972, էջ 77—78:

¹² Այս տրամաբանական մտածելակերպը հիմք ընդունելով, օտարազգի հայագետ Կարստը ծուաղ-ը դասել է իր միջին հայերենի պատմա-ստուգաբանական բառարանի այն բառերի շարքը, որոնք նոր հայկական գավառաբարառներում մնացել են որպես երկակի՝ հին և նոր արտասանությամբ օժտված միջին հայերենյան բառեր:

կա միայն խիար¹³, Գալանոսի մոտ այդ իմաստը բացակայում է¹⁴, իսկ Վիլլոտը լատիներեն cucumis-ը թարգմանել է հայերեն սեխ և սեղխ, վարուն և խիառ բառերով¹⁵, ինչ վերաբերում է «Բառգիրք հայոց»-ին, մեր ձեռքի տակ եղած ձեռագրերում և տպագիր օրինակներում այդ իմաստն արտահայտված է վարունք, վարուն, վարուք, խիար, վարունակ, կիտր բառերով¹⁶,

Բ. Հին հայկազյան բառարանի գրաբարի բառացանկերի շրէզ և շրէժ բառաձևերից առաջինը տեղ է գտել աշխարհարար-գրաբար բառարանի աշխարհարարի բառացանկում, երկրորդը՝ դրաբար-աշխարհաբար բառարանի աշխարհաբարի բաժնում, ինչպես նաև գրաբար բառահոգվածների ուսման նշումների շարքում։ Ռիվոլայի բառարանում այդ իմաստն արտահայտված է շրէզ և աղիք բառերով։ Վիլլոտը լատիներեն gluten-ը թարգմանել է շրէշու, vul. շրէզ, սոսիճ։ մնացյալ բառարաններում այդ իմաստը բացակայում է։

Գ. Երախբ բառը տվյալ հոգնակի ձևով արձանագրված է միայն «Բառգիրք հայոց»-ի 1728 թ. հրատարակության մեջ՝ բերան իմաստով, իսկ Հին հայկազյան բառարանի գրաբարի բառացանկերն ունեն միայն երախ բառաձևը հետևյալ բացատրությամբ. «բերան, կամ վերին և ստորին ծնոտքն հանդերձ ատամամբք, որ ուսմկ. ասի՝ չէնկէ»։ Հին հայկազյան բառարանի աշխարհաբարի բաժիններում, ինչպես նաև վերը հիշված մյուս բառարաններում այս բառիմաստն արտացոլված է այլ ձևերով. բերան, կզակ, չէնյէ կամ չէնկէ։

Դ. Հին հայկազյան բառարանի գրաբարի բառացանկերի խեբ բառը «եփոց դալոց. այսինքն առաջնոյ կաթին կովու» իմաստով արտահայտված է ինչպես գրաբար-աշխարհաբար բառարանի աշխարհաբարի բաժնում, այնպես էլ գրաբար բառահոգվածների ուսման նշումների շարքում։ Այդ բառը աշխարհաբարի բառացանկում մտցված է երկու ասորեր իմաստներով. 1. «Թիւլլի մը եփած կաթ»։ 2. «Բարիք. արգասիք. արդիւնք. օճան. բարօրութիւն»։ Մնացած բառարաններում այդպիսի բառաձև չկա¹⁷,

Դժվար չէ նկատել, որ վերոհիշյալ չորս բառերի և հատկապես երախ-ի համեմատական քննությունը Հին հայկազյան և նրան նախորդող բառարաններում դեռևս բավական չէ հասկանալու համար, թե Հին հայկազյան բառարանի առաջաբանում ի՞նչ հիմունք է նկատի ունեցել Մ. Սեբաստացին այդ 26 բառերը թվարկելիս, այլ կերպ ասած, նա այդ բառերը թվարկել է իրենց գրաբարյան, թե՛ աշխարհաբարյան ձևով։ Հարցի վերջնական պարզաբանման համար անհրաժեշտ է դիմել նաև Հին հայկազյան բառարանի մանրակրկիտ ուսումնասիրությանը։

¹³ Dictionarium Armeno-Latinum, Autore Francisco Rivola, Lutetiae Parisiorum, 1633 (Ա հրատարակությունը 1621-ին Միլանում)։

Joh. Joachimi Schröderi, Thesaurus Linguae Armenicae, Antiquae et Hodiernae, Amsterodami, 1711.

¹⁴ Grammaticae, et logicae Institutiones. Linguae Literalis Armenicae Armenis traditae AD. Clemente Galano. Addito Vocabulario Armeno-Latino omnium scholasticarum Dictionum. Romae, 1645.

¹⁵ Jacobo Villote, Dictionarium novum Latino-Armenum, Romae, 1714.

¹⁶ «Բառգիրք հայոց», Կ. Պոլիս, 1728 և Երևան, 1975։

¹⁷ Խեբ կաթին բառակապակցության երկրորդ մասը՝ «կաթին», թվարկման մեջ ծառայում է պարզապես հաստատելու խեբ-ի «եփոց դալոց. այսինքն առաջնոյ կաթին կովու» իմաստը, քանի որ, ինչպես նշեցինք, աշխարհաբարի բառացանկում խեբ բառը նաև այլ իմաստ ունի։

Այսպես, ուշադրության արժանի է, որ Հին հայկազյան բառարանի առաջին հատորում նրախ-ից անմիջապես հետո արձանագրված է երախակալ բառը հետևյալ բացատրությամբ. «այն, որ կալնու՝ կամ փակ է զերախն, այսինքն զբերան մարդոյ, կամ այլոց կենդանեաց: Իսկ մերթ նշանակ է զմբռնետդ սրոյ. այսինքն զկոթն. որ ասի երախակալ. զի նույալ կալեալ վինի երախն. այսինքն բերանն պատենի սրոյն»: Երախակալ բառը արտահայտված է նաև գրաբար-աշխարհաբար բառարանում այսպիսի իմաստներով. «Բերանը փակող. բերանը գոցող կամ խփող: Դարձեալ, խապզէ. թրի վամ դանկի կոթ: Դարձեալ, փէրէղվանէ»: Երախակալ բառի վերոհիշյալ իմաստներից տրամաբանորեն հետևում է, որ Հին հայկազյան բառարանի առաջին հատորում երախ-ի բերան բացատրությունը վերաբերում է ոչ միայն շնչավոր արարածներին, այլ նաև անշունչ առարկաներին՝ դանակ, սուր: Շնչավոր արարածներին վերաբերելու դեպքում այն մասնավորվում է հետևյալ լրացուցիչ նախադասությամբ. «վերին և ստորին ծնօտքն հանդերձ աստամամբք, որ ուամկ. ասի՝ շէնկէ»: Պատահական չէ, որ մեզ հասած հնագույն վկայություններում¹⁸ երախ բառը շնչավոր արարածների կապակցությամբ օգտագործված է միայն հոգնակի թվով, իսկ անշունչ առարկաների կապակցությամբ՝ միայն եզակի: Պետք է հզորակացնել, որ Հին հայկազյան բառարանի առաջին հատորի առաջաբանում երախ բառը հոգնակի ձևով է թվարկված, որովհետև Մ. Սեբաստացին նպատակ է ունեցել ընթերցողին հասկացնել, թե տվյալ դեպքում իր խոսքը շնչավոր արարածներին վերաբերող երախ-ի մասին է:

Մինչև այստեղ կասկածի ենթակա չէ այն, որ մեզ հետաքրքրող 26 «խրթնածածուկ» բառերը իրենց նախնական՝ գրաբարյան ձևով են թվարկված Հին հայկազյան բառարանի առաջաբանում: Սակայն հարց է առաջանում. այդ դեպքում ի՞նչ հիմնավորմամբ գրաբարի բառացանկերում շրէժ և վարունկ բառերի համար որպես գլխաբառ արձանագրված են համապատասխանաբար նախ՝ շրէզ և վարունգ, ապա միայն շրէժ և վարունկ: Հարցն անլուծելի է թվում, երբ նկատի ենք ունենում, որ աշխարհաբար-գրաբար բառարանի գրաբարի բաժնում այդ հերթականությունը պահպանված է միայն շրէժ բառի համար, իսկ վարունկ-ի համար խախտված է հետևյալ ձևով. «վարունկ, կամ վարունգ»:

Այս դեպքում միակ ելքը տրամաբանական մոտեցումն է նշված բոլոր փաստերին: Այսպես, շրէզ-շրէժ միօրինակ հերթականությունը Հին հայկազյան բառարանի բոլոր բաժիններում վկայում է, որ Մ. Սեբաստացին, անկասկած, շրէզ-ը համաբել է երկու բառաձևերից հնագույնը: Սակայն, ինչպես տեսանք, Հին հայկազյանին նախորդող բառարաններն ունեն միայն շրէզ ձևը. աշխարհաբարում շրէժ-ի գոյության մասին առաջին անգամ տեղեկանում ենք Հին հայկազյան բառարանի միջոցով. բնական է, որ աշխարհաբարում պահպանված գրաբար բառեր թվարկելիս Մ. Սեբաստացին նախապատվություն տար աշխարհաբարում քիչ ընդհանրացած, իր կողմից հայտնաբերված գրաբար ձևին: Ինչ վերաբերում է վարունգ-վարունկ, վարունկ-վարունգ զույգ հերթականություններին, ակնհայտ է, որ դրանք մասնամշտում են գրաբար այդ երկու բառաձևերի հավասար հնությունը¹⁹: Մենք տեսանք, որ

¹⁸ «Բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1839:

¹⁹ Հատկանշական է, որ Հին հայկազյան բառարանի առաջին հատորում «վարունգ կամ

Հին հայկազյան բառարանին նախորդող բառարանները տվյալ իմաստով ունեն սեխ, սեղիս, կիտր, ինչպես նաև խիար, խիառ օտար փոխառությունը, որ տեղ է գտել նաև Հին հայկազյան բառարանի երկու հատորներում, որպես հեղինակների կողմից հիմք ընդունված աշխարհաբարում այդ իմաստով գործածական միակ ձևը։ Սակայն, ինչպես նշեցինք, նախորդ բառարաններն ունեն նաև վարուն, վարունգ, վարուխ, վարունակ ձևերը։ Վերոհիշյալներից վարունգ և վարուխ²⁰ բառերի ուղղագրությունը կասկած չի թողնում մինչև XVIII դ. դոյություն ունեցող վերջահանգ բաղաձայնի շնչեղ խուլ արտասանության մասին։ Հայտնի է, որ միջին հայերենում և բարբառներում և ռեգայինից հետո ձայնեղ պայթականների որակը հիմնականում պահպանվում է²¹։ Հստ ախմ վարունգ բառակը միջին հայերենում կարող էր գրվել վարունկ ձևով։ Պարզ է, որ վերջահանգ բաղաձայնի շնչեղ խուլ արտասանությունը հնարավոր էր միայն վարունգ ուղղագրածի դեպքում, քանի որ շնչեղ խուլի կարող էին վերածվել հին հայերենի բացառապես ձայնեղ պայթականները։ Այսպիսով, պետք է ընդունել, որ վարունգ-ը եղել է վարունգ, վարուխ բառերի սկզբնաձևը։ Վերջահանգ բաղաձայնի շնչեղ-խուլ արտասանությունը, բնականաբար, կարող էր պատճառ դառնալ, որ գրության մեջ այդ բաղաձայնը շփոթվեր Բ հոգնակերտի հետ։ Այդպիսի մտայնության արդյունք պետք է համարել վարուն ուղղագրածը միանգամայն երկու բառարաններում։ Ինչ վերաբերում է վարունակ ձևին, այն կարող էր առաջացած լինել կամ վարուն-ից վերջածանցի հավելումով, կամ վարունկ-ից գրչագրական սխալով։ Վերջին դեպքում այն կամ գրաբարյան վարունգ-ի միջին հայերենյան ձևն է, կամ միջին հայերենում և աշխարհաբարում պահպանված գրաբարյան վարունկ ձևը։ Այս վերջին հնարավորությունը հաշվի առնելով, հասկանալի է դառնում, թե ինչու աշխարհաբարում պահպանված գրաբար բառեր թվարկելիս Մ. Սեբաստացիին վարունգ, վարունկ գրաբար հավասարազոր ձևերից նախապատվություն է տվել վարունկ-ին։

Խնդրո առարկա 26 բառերի գրաբարյան ուղղագրությունը հիմնավորելուց հետո անհրաժեշտ է բացահայտել նրանց օգտագործման ոլորտների հարցը։ Բնականաբար, առաջին միտքը, որ ծագում է, այն է, թե Մ. Սեբաստացու խոսքը XVIII դ. բարբառախոս վայրերի մասին է, և նրա միակ նպատակն է ընթերցողին մղել վերականգնելու ներկայացվող բառերի

վարունկ» գլխաբառի համար բերված է հետևյալ վկայությունը. «եզին առաջի նորա վարունգ, և դանակ, որպէսզի հատցէ՝ և կերիցէ»։ Այս տողերի իբրև հեղինակ Մ. Սեբաստացին վկայակոչել է հին պատմագիրներին։ Սակայն մեզ հայտնի է, որ դրանք պատկանում են Փ. Բուշանդին։ Վկայակոչումների հարցում Մ. Սեբաստացու կատարած ընտրությունը հավասար հնություն ունեցող վարունկ-ի առկայության դեպքում հիմնավորվում է Հին հայկազյան բառարանի ուսումնասիրության միջոցով։ Ուրիշ կապակցությամբ Մ. Սեբաստացին վկայակոչել է Խորենացու Աշխարհագրությունը, որ, հայտնի է, ունի վարենկեի ձևը։ Հին հայկազյան բառարանում այլ առիթով հին պատմագիրներից առաջ Խորենացու վկայակոչումը առանց վերջինիս աշխատությունների հիշատակման ապացուցում է, որ Մ. Սեբաստացու համոզմամբ Խորենացին նախորդել է Բուշանդին վերագրվող երկին։ «Վարունգ կամ վարունկ» բառի դեպքում հին պատմագիրներից առաջ Խորենացու Աշխարհագրության վկայակոչվելը իր հերթին ապացուցում է, որ Մ. Սեբաստացու համոզմամբ վերջնականապես լուծված չէ Աշխարհագրության հեղինակի հարցը։

²⁰ Այստեղ ե-ի բացակայությունը կարող է միայն գրչագրական վրիպակ լինել։

²¹ Հ. Աճառյան, Կիսկատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, Երևան, 1971, էջ 676, «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», էջ 115։

համապատասխան բարբառներում ունեցած ձևերը: Սակայն այդ դեպքում հանելուկային է մնում նշված վայրերի ընտրության հիմունքը մի կողմից, բարբառային այդպիսի «մասնավորման» առնչությունը նախամաշտոցյան ալբատաո հայերենի հետ՝ մյուս կողմից: Նկատի ունենալով, որ հիշատակված հայկական վայրերի թվում առկա է Հայաստանի պատմական ստորաբաժանումներից մեկը՝ Մեծ Հայքը, մենք մտածեցինք, որ այս հարցի լուծման համար անհրաժեշտ է դիմել հայ ժողովրդի պատմության ընձեռած փաստերին:

Պատահական չի կարող լինել այն, որ Մ. Սեբաստացին Մեծ Հայքը հիշատակել է Պարսից կողմերի հետ միասին: Խնդրոտ առարկա թվարկման մեջ կողմ բառը կարող է օգտագործված լինել կամ գավառ (ի կողմանս Կարնոյ, ի կողմանս Տրապիզոնի), կամ մարզ (ի կողմանս Սեբաստիոյ), կամ պարզապես որևէ քաղաքի շրջակայք (ի կողմանս Ակնայ) իմաստով, բոլոր դեպքերում որպես մի որոշակի շրջան հատկանշական անվանմամբ: Նույն սկզբունքով «ի կողմանս Պարսից» կարող է վերաբերվել միայն Պարսկահայքին: Մյուս կողմից, պատահական չի կարող լինել նաև այն, որ Մեծ Հայքի կողքին հիշատակված չէ պատմական Հայաստանի քաղաքական մյուս մեծ միավորումը՝ Փոքր Հայքը: Սկզբից ևեթ Մեծ Հայք-Փոքր Հայք հակադրության բացակայությունը ընթերցողին հուշում է, որ Սեբաստացու խոսքը այնպիսի ժամանակաշրջանի մասին է, երբ այդ հակադրությունը գոյություն չուներ: Եղած փաստերը մտածել են տալիս, որ Մ. Սեբաստացին, Մեծ Հայքը հիշատակելով Պարսից կողմերի հետ միասին, նկատի է ունեցել Արտաշես Ա-ի (189—160 թթ. մ. թ. ա.) թագավորությունից մինչև 387 թ. ընկած մի ժամանակաշրջան: Սակայն այդ դեպքում հարց է ծագում. ի՞նչ հիմունքով Մեծ Հայքից հետո նա Կարնո կողմն է հիշատակել:

Հին հայկազյան բառարանի առաջաբանի քննվող հատվածի նախընթաց «Հանգամանք կատարելույ զբառգիրքս» ենթավերնագիրը կրող մասում Բանդուկ բառի մեկնության ձևի նկարագրությունը միաժամանակ ապացուցում է, որ Մ. Սեբաստացին հիմնավոր կերպով է ներկայացրել մեզ հետաքրքրող 26 բառերի օգտագործման ոլորտները: Այսպես, այդ մասում նա տեղեկացնում է, որ Հայկազյան բառարանի բառերի ողջամիտ մեկնության համար ջանք չի խնայել ստուգելու նրանց նշանակությունները աշխարհի զանազան կողմերում գտնված տարբեր բառարաններում և պիտանի աշխատություններում, նաև օգտագործելով թարգմանական սկզբնաղբյուրներից վերցված բառերի համար՝ հունարեն, լատիներեն և այլ լեզուներով բնագրերը, իսկ հայկական գրականությունից վերցված բառերի համար՝ մեկնիչների բացատրությունները, տարբեր կիրառումների համեմատությունը և տրամաբանության ընձեռած տվյալները: Վերոհիշյալ հնարավորությունների բացակայության դեպքում Մ. Սեբաստացին դիմել է զանազան գավառաբնականի օգնությանը՝ նրանց տեղեկությունները համեմատելով այդ բառերի բնագրային կիրառությունների հետ: Այդ կապակցությամբ որպես օրինակ բերված է Աշխարհացույցում գործածված Բանդուկ բառը, որի նշանակությունը Մ. Սեբաստացին վերականգնել է շնորհիվ Պարսից կողմերի բնակիչների հաղորդած տվյալների²²: Սակայն, ինչպես վերը նշեցինք, մեզ հետաքրքրող 26 բառերի թվաբե-

22 «Բառգիրք հայկազեան լեզուի», Ա, 1749, էջ 8:

ման առիթով աշխարհաբարում ֆանդուկ բառի օգտագործման որպես ոլորտ Մ. Սեբաստացին մատնանշել է նախ Մեծ Հայքը, ապա միայն Պարսից կողմերը: Դժվար է համաձայնվել այն մտքի հետ, որ Մ. Սեբաստացու նման խորագրին հայագետը մեր հին մատենագրության մեջ վկայված այդ բառի մեկնության համար առաջին հերթին դիմած լինի Հայաստանից դուրս ապրող հայերին: «Հանգամանք կատարելոյ զբառգիրքս» բաժնում ֆանդուկ բառի օրինակով Մ. Սեբաստացին պարզապես ցանկացել է ընթերցողներին հստակացնել, որ բառերի ստույգ նշանակությունները հրեան բերելու համար դիմել է նույնիսկ Հայաստանից դուրս ապրող հայերին: Այսպիսով, Կարելի է վստահ լինել, որ խնդրո առարկա 26 բառերի օգտագործման ոլորտները նա հանգամանորեն է ներկայացրել, և որ Կարնո կողմերին վերաբերող բառերը Մեծ Հայքում չեն օգտագործվել:

Այնուհետև, ուշագրավ է այն, որ թվարկված 26 բառերից 11-ը (երախֆ, ֆանդուկ, աղառ, հօռառ, վաբունկ, թուրք, զոգի, խեռ կաթին, պժգալ, կողդինը, մոալլ) Հին հայկազյան բառարանում միմիայն վկայված իմաստ կամ իմաստներ ունեցող բառեր են²³, 9-ը (հանառ, մարմանդ, ազբն, աղի, դաս, զումառ, պրակ, սինձ, եղջիւր) վկայված իմաստների հետ միասին ունեն չվկայված իմաստ կամ իմաստներ, իսկ 5-ը (գրմունչ, կասկամ, շրէժ, սերեկ, փաթաթ) բոլորովին չվկայված բառեր են: Ավելորդ է ասել, որ ծուաղ բառի համար վկայության խոսք լինել չի կարող: Մյուս կողմից, կասկածի ենթակա չէ, որ թվարկված մեկից ավելի իմաստ ունեցող բառերի համար առավել խրթնածածուկ պետք է համարել, չվկայված իմաստի կամ իմաստների առկայության դեպքում՝ նույն այդ չվկայված իմաստը կամ իմաստները, միայն վկայված իմաստների առկայության դեպքում՝ նվազագույն վկայություն ունեցող իմաստը: Առանձին մտեցում է պետք աղի, այսինքն գաս կամ գոմար» բառերի համար: Մ. Սեբաստացին այսինքն և կամ շաղկապները օգտագործել է միայն առ բառերի կապակցությամբ՝ ոչ առանց հիմնավոր պատճառի: Պատահական չէ, որ աղի բառի երկու վկայված և մեկ չվկայված իմաստներից՝ վկայված իմաստներից մեկն է, որ համընկնում է միաժամանակ դաս և զումառ բառերի իմաստներից մեկին: Հետևաբար, այդ իմաստն էլ պետք է համարել տվյալ դեպքում Մ. Սեբաստացու կողմից առավել խրթնածածուկ նկատվածը: Քննությունը այստեղ հասցնելուց հետո կարելի է վստահորեն հավաստել, որ Մ. Սեբաստացին, փաստորեն, թվարկել է ոչ թե 26, այլ 24 «խրթնածածուկ» բառ, որոնցից 11-ը (հանառ, մարմանդ, ազբն, պրակ, սինձ, եղջիւր, գրմունչ, կասկամ, շրէժ, սերեկ, փաթաթ) Հին հայկազյան բառարանի զրաբարի բառացանկերում բոլորովին վկայություն չունեն, իսկ 12-ը (երախֆ. 1. Մակ. 9.55, ֆանդուկ. Խորեն. Աշխարհագրութիւն, աղառ. Խորեն. Աշխարհագրութիւն և Հին Բժշկարանք, հօռառ. Ագաթ., վաբունկ. Հին Պատմագիրք, թուրք. Ոսկե. 2 հատ. Ժգ, զոգի. Վարք Հարանց իզ, խեռ կաթին. Հին Պատմագիրք, պժգալ. Ոսկե. 2 հատ. Ժգ, կողդինը. Գիրք Առակաց, մոալլ. Նարեկ. խ. խա. և կդ, աղի. Նարեկ. Ի Գով. Կուս.) Հին Հայկազյան բառարանի նույն բառացանկերում նվազագույն վկայություն ունեն:

²³ «Անկարկներ միջին զրական հայերենի պատմության» (Ա, 1972) աշխատության մեջ զոգի բառը համարված է զրաբարին անժանոթ, միջին հայերենից ավանդված ենթաշերտային բառ (էջ 194):

Նշենելով վերջին 12 բառերի վկայությունների ժամանակի մասին հայագիտության մեջ մինչև օրս արտահայտված տարբեր կարծիքներին, դժվար չէ նկատել, որ դրանցից Մեծ Հայքին (նաև Պարսից կողմերին) և Կարնո կողմերին վերաբերողները կարող են փկայված լինել միայն V—VII դդ.:

Այս եզրակացությանը հանգելուց հետո կարելի է մատնանշել մեր առաջ ծառացած երկրորդ դժվարությունը հաղթահարելու բանալին: Արդարև, եթե V—VII դդ. փկայված վերոհիշյալ բառերը մինչև XVIII դ. կենդանի են մնացել ժողովրդի խոսակցական լեզվում, նշանակում է նրանք բավական խոր արմատներ են ունեցել այդ նույն ժողովրդի լեզվում: Այա, եթե այդ բառերի մի մասը մինչև XVIII դ. կենդանի է մնացել Մեծ Հայքի ողջ տարածքում, իսկ որոշ մասը միայն Կարնո գավառի խոսակցական լեզվում, կասկածի ենթակա չէ, որ նրանց գործածության ժամանակագրական ակունքները ձգվել են դեպի տարբեր ժամանակաշրջաններ. համապատասխանաբար, Մեծ Հայքում պահպանված բառերի ակունքները՝ դեպի այն ժամանակաշրջանը, երբ միասնական պետականության ստեղծումով Մեծ Հայքում կազմավորվեց միասնական խոսակցական լեզու, իսկ Կարնո գավառում պահպանված բառերի ակունքները՝ դեպի այն ժամանակաշրջանը, երբ Կարնո կողմերի բնակչությունը դեռևս չէր միաձուլվել այդ միասնական պետականության մեջ՝ իր մասնակցությունը բերելով ընդհանուր խոսակցական լեզվի աստիճանական ստեղծմանը: Մեծ Հայքի և Կարնո կողմերի բնակիչների խոսակցական լեզվում XVIII դ. գործածական վերոհիշյալ գրաբար բառերի վկայությունների ժամանակը ապացուցում է, որ V դ. այդ ընդհանուր խոսակցական լեզուն արդեն ստեղծված էր: Եթե ընդունենք, որ լեզվական երևույթների արմատավորման համար անհրաժեշտ է ավելի քան 200 տարի²⁴, մյուս կողմից, եթե հաշվի առնենք, որ V դ. գրի առնված լեզուն չէր կարող ընդհանրություն ձեռք բերած լինել ճիշտ այդ ժամանակ, Մեծ Հայքի և Կարնո կողմերի վկայված բառերի հիման վրա պետք է անառարկելի համարենք, որ Մեծ Հայքում ընդհանուր խոսակցական լեզուն գոյություն ուներ առ առավել 300 տարի անց այն ժամանակաշրջանից, երբ Մեծ Հայքը ճանաչվեց հայկական միակ ինքնուրույն պետություն՝ վերջնականապես իր կազմում ունենալով Կարնո կողմերը, այսինքն՝ Տիգրան Բ-ի (95—56 թթ. մ. թ. ա.) թագավորության կազմավորումից հետո՝ մ. թ. III դ. կեսերից մինչև IV դ. սկիզբը: Պետք է անառարկելի համարենք նաև այն, որ մինչև այդ թվականները Կարնո կողմերում պահպանվել էր տեղական խոսակցական լեզուն:

Սակայն չպետք է մոռանալ, որ Հին հայկազյան բառարանի առաջաբանում՝ վկայված բառերի հետ միասին՝ թվարկված են նաև փկայություն չունեցող բառեր, որոնք «յայլ ուստեք քան ի գրոց» հավաքվել են հեղինակների կողմից²⁵: Այդ կարգի բառերի վերաբերյալ անհրաժեշտ բացատրություն տրված է միայն երկրորդ հատորում, որովհետև ժամանակի սղության պատճառով, առաջին հատորի տպագրության ժամանակ, վերջինից դուրս են մնացել և՛ բառեր, և՛ նշանակություններ, և՛ սկզբնաղբյուրներ, որոնք ըստ հնարավորին հայտնաբերվել և ստուգվել են երկրորդ հատորի տպագրության ժա-

²⁴ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Վիեննա, 1866, էջ 161:

²⁵ «Բառգիրք հայկազեան լեզուի», Բ, 1769, էջ 5:

մանակ²⁶։ Այսպես, հեղինակների իսկ խոսքերով. «Քանզի մինչ բազում բառք էին յաշխարհաբառին, որոց գրաբառքն ի գրեանց ոչ էին ելեալք, և առ լրութիւն բառարանին, և առ կատարումն պիտոյից ուսումնասիրին հարկաւոր էին գրաբառք նոցա, փոյթ յանձին կալաք ի բազում տեղեաց որոնագիւտ լինիլ ստոյդ և վայելուչ բառից»²⁷։ Այս բացատրությունը տարածելով առաջին հատորի առաջաբանի մեզ հետաքրքրող հատվածի վրա, տրամաբանորեն հանդում ենք այն եզրակացություն, որ Մեծ Հայքին հատուկ՝ ճանաչ և Կարնո կողմերին հատուկ՝ գրմանը և մաքմանը չվկայված բառերը հայտնաբերվել են նախամաշտոցյան շրջանին վերաբերող այլատառ հայերեն մատյաններում։ Բնականաբար, այլ եզրակացության չի կարելի հանգել նաև հիշատակված մյուս վայրերին՝ Սեբաստիային, Ակնին, Տրապիզոնին հատուկ չվկայված բառերի կապակցությամբ²⁸։

Վերջին երեք կողմերին վերաբերող վկայված բառերից (Սեբաստիա՝ աղի, Ակն՝ գոգի, խեբ կաթին, պժգալ, Տրապիզոն՝ կողմինը, մոսյլ) դատելով, Մեծ Հայքում ընդհանրություն ձեռք բերած լեզուն V դ. ընդգրկել էր նաև Ակնի և Տրապիզոնի կողմերը, ամենայն հավանականությամբ, վերջինների Մեծ Հայքի հետ հաղորդակցական ճանապարհներով կապված լինելու պատճառով, Ակնը՝ Արևմտյան Ծփրատով, Տրապիզոնը՝ Թավրիզ—Կարին—Տրապիզոն տարանջրի ճանապարհով։ Մ. Սեբաստացու տվյալների համաձայն՝ V դ. Մեծ Հայքում ընդհանրացած խոսակցական լեզվի տարածքային սահմանների մեջ Սեբաստիայի կողմերը չէին մտնում։ Նարեկացու վկայած աղի բառը մատնացույց է անում միայն X դ. հետո, պատմական դեպքերի բերումով ստեղծված Մեծ Հայք—Սեբաստիա լեզվական առնչությունը։ Այդ նույն շրջանում Տրապիզոնը ևս լեզվական մերձեցման մեջ է եղել Մեծ Հայքի հետ (նկատի ունենք մոսյլ բառի վկայությունը)։

Այսպիսով, Մ. Սեբաստացին ապացուցում է, որ V դ. գրի առնված գրաբարը «հասարակաց» լեզու էր պատմական Մեծ Հայքի ողջ տարածքում, ինչպես նաև Ակնի և Տրապիզոնի կողմերում՝ III դ. կեսերից։ Այն փաստը, որ XVIII դ. այդ բառերը նույն վայրերում «հասարակաց» չէին, իր հերթին ապացուցում է, որ V դ. հետո գրաբարը ինչ-որ ժամանակաշրջանում մասնավորվել է, առանձին վայրերում պահպանվելով հնագույն ժամանակում տվյալ վայրին յուրահատուկ բառապաշարով։ Մյուս կողմից, այն փաստը, որ այդ բառերի որոշ մասը հասել է մինչև XVIII դ. ընդհանուր մնալով Մեծ Հայքի ողջ տարածքում, ապացուցում է, որ այդ ընդհանրությունը նույնքան հին է, որքան մասնավորումը, և որ V դ. հետո եղել է այնպիսի ժամանակաշրջան, երբ ընդհանուրն ու մասնավորը գոյություն են ունեցել կողք-կողքի։ Հայտնի է, որ 387 թ. բաժանմամբ Հայաստանի մեծագույն մասը անցավ Պարսկաս-

²⁶ Նույն տեղում, էջ 4։

²⁷ Նույն տեղում։

²⁸ Ավելի հստակ կերպով Մ. Սեբաստացին չէր կարող հայտնել նախամաշտոցյան այլատառ հայերեն մատյաններից քաղված բառերը Հայկազյան բառարանում ընդգրկելու մասին, որովհետև, ինչպես պարզ ասված է առաջին հատորի ակնարկված հատվածում, այդ մատյանները վերաբերում են նաև կուսապաշտական շրջանին, իսկ քրիստոնեությունը իր հաստատման օրվանից պայքար ծավալեց հեթանոսական շրջանի հայկական գրականությունը ոչնչացնելու համար (է. Բ. Աղայան, Նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այբուբենի և հարակից հարցերի մասին, Երևան, 1977, էջ 216)։

աանին՝ բացառությամբ մի քանի շրջանների, որոնցից Կարնո կողմերը կաղմակերպվեցին որպես Հռոմեական կայսրությանը ենթակա ինքնավար նահանգ։ Մխիթար Սեբաստացու վերոհիշյալ ապացույցները համեմատելով պատմական այս իրադարձության հետ հանգում ենք հետևյալ ահսակեաին։

III դ. կեսերից հայկական պետության սահմաններում ընդհանրություն ձեռք բերած խոսակցական հայերենը Հայաստանի առաջին բաժանումից (387 թ.) հետո, ամբողջ V դ. ընթացքում շարունակեց մնալ նույն տարածության վրա ապրող հայության բնահանուր հաղորդակցման միջոցը, բնականաբար, ընդհանուր մնալով նաև այդ հայության հետ սերտ կապերի մեջ եղող վայրերի (Ակնա և Տրապիզոնի կողմեր) հայերի համար։ Քաղաքական մասնատվածությունը, սակայն, աստիճանաբար զուգորգվեց լեզվական մասնատվածությամբ, որի հետևանքով պատմական Մեծ Հայքի սահմաններում ընդգրկված հայկական նահանգներում, համընդհանուր գործածություն ունեցող բառապաշարից բացի, գործածվեց նաև տեղական բառապաշարը։ Մեծ Հայքի սահմաններից դուրս գտնվող Ակնի և Տրապիզոնի նահանգները, որոնք համեմատաբար թույլ կերպով կարող էին ներգրավված լինել ընդհանուր խոսակցական լեզվի ոլորտի մեջ, պահպանեցին միայն իրենց տեղական բառապաշարը։ Եթե Մ. Սեբաստացին աշխարհաբարում պահպանված գրոց կալ ընդաբույս լեզվի բառերի թվում ընդգրկել է X դ. վկայված բառեր, նշանակում է, նրա կարծիքով, գրոց կամ ընդաբույս լեզվի շրջանը ներառում է X դ. Հեռեարար, ակնբախ է. որ նրա կարծիքով, գրոց լեզվի աստիճանական մասնատվածությունը՝ Մեծ Հայքի սահմաններում ընդհանրության համատեղությամբ՝ տեղի է ունեցել մինչև X դ.։

Մխիթար Սեբաստացու ավյալները ենթադրում են նաև հեռեյալ եզրակացություններ։

Ա. Արդի հայկական մի շարք բարբառներ (Կարին, Սեբաստիա, Ակն, Տրապիզոն) սկսել են ուրվագծվել նախամաշտոցյան շրջանում։

Բ. Այդ բարբառները վերջնականապես ուրվագծվել են ետմաշտոցյան շրջանում, V դ. հետո, մինչև X դ.։

Գ. Պատմական Փոքր Հայքը մի շարք նահանգներ (Կարին, Սեբաստիա, Ակն) հայկական բնակչություն և ունեցել էին ժամանակներից, Կարինը և Ակնը՝ Տիգրան Բ-ի հայկական թագավորության սկզբնավորումից շատ առաջ, Սեբաստիան՝ գրերի գյուտից առնվազն մի քանի հարյուր ամարի առաջ²⁹։

МХИТАР СЕБАСТАЦИ И ВОПРОС ВЗАИМООТНОШЕНИЯ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА И ДИАЛЕКТОВ

ВАНУИ АДЖЕМЯН

Резюме

В предисловии первого тома «Баргирк Айказян лезви» («Словарь армянского языка», Венеция, 1749) М. Себастици утверждает, что древнеармянский язык (грабар) с середины III в. стал всеобщим раз-

²⁹ Վերջին եղևու եզրակացությունների հետ նույնանում են հայ բարբառագիտության մեջ հաստատված տեսակետներ (Գ. Բ. Ճ ա ղ ո Վ յ ա ն, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 189, 192)։

говорным языком государства Великой Армении, оставаясь им на протяжении IV и V вв. Грабар являлся также разговорным языком Акна и Трапизона, которые контактировали с В. Арменией. Однако политическая раздробленность постепенно привела и к языковой. Вследствие чего в провинциях, входящих в пределы исторической В. Армении, наряду со всеобщей лексикой употреблялась и местная лексика, чего нельзя сказать о провинциях, не входящих в пределы вышеупомянутой территории, ибо здесь употреблялась только местная лексика. Важно отметить, что раздробление лексики грабара с одновременным употреблением всеобщей лексики на территории В. Армении, согласно данным, приводимым М. Себастаци, наблюдалось до X в.